ՀԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի 31, 2023

Առանցքային տվյալներ.

101,848
փախստական է եկել Հայաստան

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

6,059 ծածկոց

6,358 անկողնային պարագա

5,871 բարձ

1,952 հիգիենայի հավաքածու

1,399 խոհանոցային հավաքածու

3,361 ներքնակ

Ֆինանսավորում.

14.6 մլն ԱՄՆ դոլար

է պահանջվում 2023-2024 թթ., այդ թվում արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 46%

Պակասող ֆինանսավորում՝ 54%

6.7 մլն ԱՄՆ դոլար

է ստացվել առ 2023 թ. հոկտեմբերի 31

Համակարգում

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

Հայաստանի իշխանություններն այս տարվա սեպտեմբերի 24-ից ի վեր ԼՂ-ից տեղահանված 101,848 փախստական են հաշվառել: Հոկտեմբերի 26-ին Կառավարությունը փախստականներին մեկ տարի ժամկետով **ժամանակավոր պաշտպանություն** տրամադրելու մասին որոշում ընդունեց: Քանի որ փախստականների մեծամասնությունն առանց անձնական իրերի է եկել Հայաստան, նրանք **անհետաձգելի օգնության** կարիք ունեն, այդ թվում՝ կանխիկ գումարի, կացարանի, ոչ պարենային ապրանքների եւ առաջին անհրաժեշտության իրերի, ինչպես նաեւ բժշկական եւ սոցիալ-հոգեբանական աջակցության:

ՄԱԿ ՓԳՀ արձագանքն արտակարգ իրավիճակին

Փախստականների պաշտպանություն

ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցը բեռնաթափում է փախստականներին համար նախատեսված հումանիտար օգնությունը: Երեւան, 2023 թ. հոկտեմբերի 7: ©UNHCR/Varazdat Rafayelyan

- 2023 թ. նոյեմբերի 1-ից ՄԱԿ ՓԳՀ-ն տնային տնտեսությունների պաշտպանության վեցշաբաթյա մշտադիտարկում է սկսել, որի նշանակետում Ղարաբաղից եկած **2,500 փախստականներն են:** Հավաքագրված տեղեկությունների հիման վրա ՄԱԿ ՓԳՀ-ն միտումների, պաշտպանության հնարավոր ռիսկերի, խոցելիությունների եւ հարցվողների կարիքների վերլուծություն կիրականացնի:

- Այս տարվա հոկտեմբերի 1-ից ի վեր՝ ավելի քան **1,500 փախստական զանգահարել է** ՄԱԿ ՓԳՀ թեժ գիծ, որից 200 զանգը՝ հոկտեմբերի 20-26-ը: Փախստականների 48%-ը նշել է կացարանի, 27%-ը՝ անկողնային պարագաների, 25%-ը՝ սննդամթերքի, 18%-ը՝ կենցաղային պարագաների, 10%-ը՝ հիգիենայի պարագաների, իսկ 8%-ը՝ առողջապահական ծառայությունների կարիքի մասին:

- Այս պահի դրությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն այցելել է տարբեր մարզերի **56 համայնք** եւ զրուցել **121-ից ավել** փախստական ընտանիքների հետ՝ ուղղորդելով նրանց համապատասխան ծառայություն մատուցողների եւ ապահովել, որ հրատապ կարիքներ ունեցող փախստականներն ընդգրկվեն ՈՊԱ տրամադրման ցուցակում:

Ապաստան եւ ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- 2023 թ. հոկտեմբերի 3-27-ը ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով **24,235 ՈՊԱ** (բարձեր, հիգիենիկ պարագաների հավաքածուներ, ծածկոցներ, ծալովի մահճակալներ, արեւային լապտերներ, անկողնային սպիտակեղեն, խոհանոցային հավաքածուներ, այլ) է հատկացրել երկրի տարբեր մարզերում ապրող **2,087 փախստական տնային տնտեսությունների:** Առաջիկա օրերին ՄԱԿ ՓԳՀ-ն կսկսի մասնավոր հատվածի գործընկերության շրջանակում նվիրաբերված 1,700 ձմեռային ձեռնոցների բաշխումը:

- 2023 թ. սեպտեմբերի 30-ից Հայաստան է ժամանել ՈՊԱ-ով բեռնված **28 բեռնատար,** եւ տարբեր մարզերի փախստականներին է բաժանվել **34,000 ՈՊԱ:**

2023 թ. հոկտեմբերի 23-ին Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) եւ ՄԱԿ ՓԳՀ-ն կազմակերպել էին **Առաջնային կարիքների համակարգման** թեմատիկ հանդիպում՝ Փախստականների կարիքներին արձագանքման ծրագրի (ՓԿԱԾ) շրջանակում ներառելով նաեւ պարենի, կացարանի եւ ՈՊԱ հարցերը: Մասնակիցները ներկայացրին իրենց ծրագրերը՝ նպատակ ունենալով համակարգել ՈՊԱ բաշխումը եւ նպաստել կացարանների տեխնիկական գնահատմանը: Հոկտեմբերի 27-ին **Փախստականների պաշտպանության թեմատիկ** հանդիպման համանախագահներն էին ԱՍՀՆ-ն եւ ՄԱԿ ՓԳՀ-ն, որի ընթացքում քննարկվեցին փախստականների աջակցության ծրագրերը: Իսկ հոկտեմբերի 31-ին **դիմակայունության հարցերով հանդիպմանն** ուսումնասիրվեցին զբաղվածության քաղաքականությունները, բիզնեսին աջակցությունը եւ ֆինանսավորման հասանելիության նախաձեռնությունները: Միջգործակալական արձագանքմանն ավելի մանրամասն ծանոթանալու համար տե՛ս միջգործակալական արձագանքման թիվ 3 թարմացումը:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների խնդրում ենք համար կապ հաստատել.
ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, armye@unhcr.org